

ճեան, եւ անոնց մէջ բացառիկ տեղ գրաւող՝ Պետրոս Ազամեան: Յիսուսէ աւելի մանրավէպեր ունիմ այս հատորին մէջ, մեծ մասը անձնական նօթերէ քաղուած և անտիպ, ուր կ'երեւան նաեւ Ճէճիգեան, Չերազ, Քէչեան, Ալիիար, Մերենց, Տիգրան Չուհաճեան, Գալուստ կոստանեան, եւ ուրիշներ, համառօտ ուրուագիծներով եւ անցողակի: Էջեր ունիմ «աշակերտին յուշատետրէն» և «ուսանողին յուշատետրէն», «գարավերջի տարիներէն», ուր առիթ ունեցայ նորէն խօսելու Անցողիկն վրայ, զոր չեմ ուզեր շփոթել նեւին հետ, եւ Մասիսի գրական գործունէութեան վրայ, 1884էն 1891: Ահա՛ ամբողջ նիւթը, որուն մաս կը կազմէ նաեւ մանրամասն պատմութիւնը Արեւելեան Քաւրոնիսի եւ Օբրազիւղի ներկայացմանց (1850—1875) 100ի մօտ էջերով: Հա-

տորին կը կցեմ 1850էն մինչեւ 1875 հայ լեզուով ներկայացուած եւ հատորիս մէջ յիշուած թատերախաղերու ցուցակը՝ առաջին ներկայացման թուականներով եւ հեղինակին կամ թարգմանիչին անունով, 130էն աւելի թատերախաղեր որոնցմէ շատեր իրենց պատմութիւնն ունին, յաճախ շահեկան եւ ժամանակին թատերական բարբերուն տեսակէտով յատկանշական:

Բայց կարծեմ թէ քիչ մը շատախօս եղայ այսօր նորէն, եւ ինքզինքովս զբաղիլ տուի քեզ: Կը յուսամ որ ներողամիտ կ'ըլլաս:

Սիրով ու կարօսով կը մնամ
Միս անձնուերդ
ՀՐԱՆՏ ԱՍԵՏՈՒՐ

ԱՐԵՒՄՈՒՏՔԻ ԷՋԵՐ

Ձիաւո՛ր աղջիկ բար ու կաճանի,
Մուկին արեան մէջ կարմիր կը ծընի.
Ահա վարդավառ պատկերդ նորէն,
Երբ կը թրուչիս վեր խորունկ ձորերէն:

Գեան ալեգորիար երգեց քեզ օրօր,
Շառաչուն լեզուովս իր գիշերն բոլոր.
Բոյնդ անոր ափին ամբակուռ կոճող,
Երկինք տա՛ր հոգիդ, բոցի մէջ կայծող:

Թաղիքէ թեզան, պատմութեանդ հիւր,
Պատափ բանուածքով, մուկին մի՛ նայիր.
Բաշին հետ ձիւղ թող ծաղկոտ սարերն
Վայրի ձեռքերով ճամբադ բուրվաւեն:

Կնքէ՛ ձայները, արեւներուն տա՛ր
Խօսքը անդունդին, ես տունէս օտար
Գարձած քեզ նայիմ երազ աչքերով,
Քարերուն հոգին յոյսով մաշելով:

Բըւընկցուր հազար մացառ՝ կայծերէն
Ջոր կը ցանցընես երբ ձիւ սիգալէն
Կը սըլանայ վեր շառագոյն բարձանց,
Գէպ ի կատարներն լերանց լուսապանծ:

Ձիաւո՛ր աղջիկ, երկնայի՛ն աղջիկ,
Թող հասնի շընչ հատ հեւքն իսկ հաստածիգ
Թուխ մայրիներուն, ամպին ու ձիւնին,
Շո՛ւտ, շուտ հասիր դուն արծաթ համբոյրին:

Յիւստելիա

ԳՐԵԳՈՐ ԱՐԱՅԱՆԻ